Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը
Թվինինգ Ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության զեկույց

ՀՍԳԻ

Գործունեություն Ե.3
Տեխնիկական մեթոդաբանության մշակում

Առաքելությունը իրականացրել են `

Օսկարս Ալկսնիս, բաժնի ղեկավար
Փոլ Լուբզոն, բաժնի ղեկավար

Հայաստան, Սեպտեմբերի 5-9, 2011

Տարբերակ 1 ին, նախագիծ

Հայաստանի Ազգային Վիճակագրական ծառայություն	Լատվիայի վիճակագրության կենտրոնական բյուրո	Դանիայի վիճակագրություն

Հեղինակների անունները, հասցեները և էլ. փոստի հասցեները

Օսկարս Ալկսնիս, ՍԳԻ բաժնի ղեկավար, Լատվիայի Վիճակագրության կենտրոնական բյուրո, Գների վիճակագրության վարչություն
Lacplesa 1
LV-1301, Ռիգա
Oskars.Alksnis@csb.gov.lv

Փոլ Լուբզոն, բաժնի ղեկավար, Դանիայի վիճակագրություն, Գների և սպառման բաժին
Sejrøgade 11
DK-2100, Կոպենհագեն
pal@dst.dk

Հապավումների ցանկ

ՀՍԳԻ	Սպառողական Գների Ինդեքս
ՍԳԻ	Սպառողական Գների Ինդեքս
ԿԱՀ	Կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
ՇԵ	Շահառու Երկիր
ԱՊ	Անդամ Պետություն
ԱՍԴՆ/ դասակարգման	Անհատական սպառման դասակարգիչը ըստ նպատակների դասակարգման ՀՍԳԻ վերաբերյալ՝ ըստ ՀՍԳԻ 1749/1999 Կանոնակարգի
ՏԱ	Տեխնիկական Առաջադրանք
ՀՀ ԱՎԾ	ՀՀ Ազգային Վիճակագրական ծառայություն
ԱՄՀ	Արժույթի Միջազգային Հիմնադրամ

Բովանդակությունների ցանկ

0.	Ամփոփ Նկարագիր	4
1.	Ընդհանուր մեկնաբանություններ	5
2.	Գնահատում և արդյունքներ	6
3.	Եզրակացություններ և առաջարկություններ	9
4.	Գործողությունների իրականացում մինչև հաջորդ առաքելություն (Ե.4)	9

Հավելվածներ

Հավելված 1 Տեխնիկական առաջադրանք 11
Հավելված 2 Առաքելության ծրագիր 13
Հավելված 3 Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել 15
Հավելված 4 Գնադիտարկումների քանակի նվազեցման վերաբերյալ վերլուծություններ 16
Հավելված 5 Բաղադրիչի աշխատանքային ծրագիրը (արդիականացված) 19

Այլ հավելվածներ, որոնք կազմվել են սույն զեկույցի համար

Հավելված Ե3.6 Որակի ճշգրտման թեմայով շնորհանդես
Հավելված Ե3.7 Արտադրական համակարգերի վերաբերյալ շնորհանդես – տվյալների վավերացում և ստուգում

0. Ամփոփ Նկարագիր

Ուսումնասիրվեցին ընտրանքի չափի նվազեցման հետ կապված վերլուծությունները՝ ամսեկան երեքից երկու գնային դիտարկումներ իրականացնելու վերաբերյալ և եզրակացությունն այն է, որ այս կրճատումը պետք է իրականացվի բոլոր արտադրանքների համար, բացառությամբ թարմ մրգերի և բանջարեղենի: Որոշվեց, որ վերլուծությունները կշարունակվեն ամբողջ տարվա կտրվածքով:

ՀՀ ԱՎԾ-ի Տնային տնտեսությունների հետազոտության բաժինը համաձայնվել է կիրառել ԱՍԴՆ (COICOP) դասակարգիչը իրենց ԿԱՀ աշխատանքներում սկսած 2012 թվականից, որը իր հերթին կնպաստի ՍԳԻ կշիռների տարեկան արդիականացման գործընթացին և ՀՍԳԻ պահանջներին համապատասխան այն կազմելու համար:

Որակի ճշգրտման ընթացակարգերի թեմայով իրականացվեց սեմինար ընտրված ապրանքների խմբերի համար, ինչպես նաև մեկ այլ սեմինար էլ նվիրված էր SS լուծումների քննարկումներին (արտադրական համակարգեր):

Քննարկումների համաձայն, թարմացվեց աշխատանքային ծրագիրը, որը մշակվել էր Ե.1 և Ե.2 առաքելությունների ընթացքում:

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն առաքելության զեկույցը պատրաստվել է ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության և վերջինիս ԵՄ գործընկերների կողմից: Սա բաղադրիչ Ե–ի շրջանակներում թվով երկրորդ առաքելությունն էր և Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքսի երրորդ գործունեությունն էր՝ Ե.3, որի թեման էր Տեխնիկական Մեթոդաբանության մշակումը:

Առաքելության նպատակները հետևյալն էին՝ տես հավելված 1

- Աջակցել ընտրանքի չափի նվազեցման հետ կապված վերլուծությունների վերաբերյալ եզրակացություններ տալու գործընթացում;
- Հետևել տարածքային վիճակագրական գրասենյակների կազմակերպչական աշխատանքների հետևանքներին, որոնք կապված են գնադիտարկումների ժամանակային և ծավալային հնարավոր փոփոխությունների հետ;
- Խորհուրդներ տալ ընտրանքի տարեկան արդիականացումների վերաբերյալ;
- Աջակցել որոշելու սպառման այն ոլորտները, որտեղ պետք է կատարվեն որակի ճշգրտման մեթոդների փոփոխություններ;
- Որակի ճշգրտման մեթոդների գիտելիքների և փորձի փոխանակում, մասնավորապես նրանց, որոնք վերաբերվում են տեխնոլոգիական արտադրանքներին;
- Աջակցել ապահովելու համար որպեսզի բավարար թվով ապրանքներ և էլեմենտար ագրեգատներ ներկայացնեն սպառողական շուկայի բազմազանությունը COICOP-ի յուրաքանչյուր կատեգորիայում;

ԱՊ փորձագետները ցանկանում են իրենց երախտիքի խոսքն արտահայտել բոլոր այն բարձրաստիճան պաշտոնյաներին և անձանց, որոնց հետ հանդիպումներ են ունեցել ՀՀ ԱՎԾ-ում՝ ցուցաբերված աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որը տրամադրվեց նրանց Երևանում գտնվելու ժամանակ և մեծապես նպաստեց փորձագետների աշխատանքներին:

Սույն զեկույցում արտահայտված կարծիքները և տեսակետները պատկանում են ԱՊ փորձագետներին և դրանց համապատասխանությունը Դանիայի Վիճակագրության կամ Լատվիայի Վիճակագրության կենտրոնական բյուրոյի տեսակետների հետ բոլորովին պարտադիր չէ:

2. Գնահատում և արդյունքներ

Ընտրանքի չափի նվազեցում

ՀՀ ԱՎԾ-ի Գների վիճակագրության բաժինը ԱՊ փորձագետներին նախապես տրամադրել է ընտրանքի չափի նվազեցման հետ կապված վերլուծություններ՝ ամսեկան երեքի փոխարեն երկու անգամ իրականացնելու հնարավորությունները: Այս վերլուծությունները վերարտադրված են հավելված 4-ում: Վերլուծությունները բաղկացած են երկու մասից: Նախ և առաջ, վերլուծություններ են իրականացվում, թե ինչպիսին կլինի ազդեցությունը ինդեքսի վրա, եթե բոլոր ապրանքների գները ամսեկան հավաքագրվեն միայն երկու անգամ: Երկրորդը, վերլուծություններ են իրականացվում ամսեկան երեք անգամյա գնադիտարկումները միայն թարմ մրգերի և բանջարեղենի համար պահպանելու առումով, միաժամանակ մյուս բոլոր ապրանքների համար գնադիտարկումների քանակը նվազեցնելով և դարձնելով ամսեկան երկու անգամ: Վերլուծությունները ընդգրկում են ութ ամիսները՝ 2011 թվականի Հունվարից մինչև Օգոստոս:

Վերլուծությունների առաջին մասը ցույց է տալիս տարբերությունը՝ համեմատելով ընդհանուր ՍԳԻ-ի գնադիտարկումները երկու մեթոդների հետ՝ 0.7 տոկոսային կետով ամսեկան փոփոխությունը Հունվար ամսում, սակայն այնուհետև այն մնում է +/- 0.4 տոկոսի շրջանակներում:

Վերլուծությունների երկրորդ մասում ներկայացվում է տարբերությունը՝ ընդհանուր ՍԳԻ համեմատելով գնադիտարկումների երկու մեթոդների հետ, որը չի գերազանցում փոփոխությունների ամսեկան չափի +/- 0.2 տոկոսային կետը:

ԱՊ փորձագետները համաձայնվեցին, որ երկրորդ լուծումը կիրառելու պարագայում, որը իրենից ներկայացնում է ամսեկան երկուական գնային դիտարկումներ՝ բացառությամբ թարմ մրգերի և բանջարեղենի, որոնց համար իրականացվում են ամսեկան երեք անգամյա գնադիտարկումներ, ընդհանուր առմամբ չի նվազեցնի ՍԳԻ որակը: ԱՊ փորձագետները առաջարկում են բոլոր ապրանքային խմբերի համար գնադիտարկման հաճախականությունը փոխարինել ամսեկան երեքից երկուսի՝ բացառությամբ թարմ մրգերի և բանջարեղենի:

Որևէ եզրահանգում չարվեց թարմ մրգերի և բանջարեղենի գնադիտարկումները ևս ամսեկան երեքից երկուսով փոխարինելու վերաբերյալ, քանի որ անհրաժեշտ է իրականացնել առավել մանրակրկիտ վերլուծություններ: Հետևաբար, առաջարկվեց ընդլայնել վերլուծությունները ութ ամսվա կտրվածքով՝ ներառելով ամբողջ տարին:

Նաև որոշվեց, որ պետք է իրականացնել թարմ մրգերի և բանջարեղենի զամբյուղի առավել մանրակրկիտ վերլուծություններ՝ պարզելու համար, թե որ արտադրանքներն են որոնք կարող են հիմնական փոփոխականության պատճառ հանդիսանալ: Նման հետագա վերլուծությունները ի հայտ կբերեն թարմ մրգերի և բանջարեղենի այն խումբը, որոնց համար գնադիտարկումների նվազեցումը ամսեկան երեքից երկուսով իրատեսական չի լինի:

Գնադիտարկումների քանակի նվազեցումը ամսեկան երեքից երկուսով դրանք փոխարինելու վերաբերյալ վերլուծությունները վերջնական չեն և շարունակաբար

իրականացվելու են: ԱՊ փորձագետները և ՀՀ ԱՎԾ-ի Գների բաժինը համատեղ որոշեցին հետաձգել վիճակագրական տարածքային գրասենյակներում աշխատանքների կազմակերպչական հետևանքների հետ կապված քննարկումները և թողնել դա հաջորդ առաքելության համար: Սա արտացոլելու համար թարմացվեց բաղադրիչի աշխատանքային ծրագիրը, որը կազմվել էր Ե.1 և Ե.2 գործունեությունների ընթացքում: (հավելված 5)

<u>ՍԳԻ ընտրանքի տարեկան արդիականացում</u>

Ընտրանքի արդիականացման թեման բաղկացած է երկու մասից, որոնք միասին փոխկապակցված են՝ ընտրել այն արտադրանքները, որոնք պետք է ընդգրկվեն ընտրանքում և կշիռների արդիականացում:

Ինչը վերաբերվում է ընտրանքի արդիականացմանը, քննարկվեցին նոր էական ապրանքների և ծառայությունների ընտրման և ՍԳԻ/ՀՍԳԻ ընտրանքում դրանց ներկայացման ընդհանուր պրակտիկան: Քննարկվեցին Լատվիայի Վիճակագրության Կենտրոնական բյուրոյի և Դանիայի վիճակագրության ընդհանուր փորձը և մոտեցումները: Նաև բավականին տեխնիկական քննարկումներ տեղի ունեցան գործնականում դրանց կիրառման վերաբերյալ: ՀՀ ԱՎԾ-ի Գների բաժինը, հետևելով Ե.1 և Ե.2 գործունեությունների առաջարկներին, ընդունել է COICOP/HICP, չնայած դեռ պետք է լուծվեն որոշ աննշան հարցեր մի քանի ապրանքների վերջնական վերախմբավորման հետ կապված:

Համառոտ քննարկումներ իրականացվեցին ընտրանքում հավաքագրված գների քանակի օպտիմալացման վերաբերյալ: Որպես նման վերլուծություններ իրականացնելու մեթոդաբանության օրինակ ԱՊ փորձագետները առաջարկեցին ուսումնասիրել Ավստրիայի վիճակագրության կողմից պատրաստված փաստաթուղթը:

Ինչ վերաբերվում է կշիռներին, հիմնական խնդիրը կապված է տարբեր դասակարգիչների կիրառման հետ, որոնք օգտագործվում են Գների բաժնի և Տնային տնտեսությունների հետազոտության բաժինների կողմից: Ե.1 և Ե.2 գործունեություններից ի վեր ՀՀ ԱՎԾ-ի կողմից բավականին լայնածավալ և մանրակրկիտ աշխատանք է կատարվել և գտնվել է երկու դասակարգիչների միջև լիակատար բանալին: Այս միջոցը ստեղծվել է Գների բաժնի և Տնային տնտեսությունների հետազոտության և Մեթոդաբանության բաժինների համատեղ համագործակցության արդյունքում: Տնային տնտեսությունների հետազոտության բաժնի հետ որոշում կայացվեց, որ նրանք պետք է 2012 թվականի Հունվարից կիրառեն COICOP-ի դասակարգիչը և ուղարկեն իրենց հարցաթերթիկները՝ համաձայն COICOP-ի 2012 անվանացանկի: Սա մեծապես կնպաստի ՍԳԻ կշիռների տարեկան փոփոխման գործընթացին և հետևաբար համապատասխան կլինի ՀՍԳԻ կանոնակարգին:

ՀՀ ԱՎԾ հաջողությամբ լուծել է ապահովագրության կշիռների հետ կապված խնդիրների հարցը, քանի որ պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ Կենտրոնական բանկի հետ՝ համապատասխան տեղեկատվության տրամադրման վերաբերյալ: Տվյալները հնարավորություն կտան գնահատել կշիռները որպես հայցերի զուտ վճարումներ, ինչը որ համապատասխանում է ՀՍԳԻ պահանջներին:

Որակի ճշգրտում

ԱՊ փորձագետների կողմից առաքելության ընթացքում ներկայացվեց Որակի ճշգրտման թեմայով սեմինար: Այս սեմինարի շնորհանդեսը ներկայացված է Հավելված Ե3.6-ում: Շնորհանդեսի թեմաներում ընդգրկված էին ԵՄ կանոնակարգը և հատուկ ապրանքների խմբերի վերաբերյալ ընդհանուր առաջարկությունները, ինչպես նաև Լատվիայի կոնկրետ փորձը այս ոլորտում: Տեխնիկական քննարկումներ տեղի ունեցան հետևյալ ապրանքային խմբերի վերաբերյալ՝ նոր ավտոմեքենաներ, օգտագործված ավտոմեքենաներ, տեխնոլոգիական ապրանքներ, և յուրաքանչյուր ապրանքային խմբերի համար կիրառելի տարբեր մեթոդներ: ՀՀ ԱՎԾ Գների վիճակագրության բաժինը նախապես ԱՊ փորձագետներին էր տրամադրել Հայաստանի ՍԳԻ կիրառվող որակի ճշգրտման տարբեր մեթոդները, որոնք բավականին նպաստեցին արդյունավետ քննարկումներ իրականացնելու համար:

SS համակարգ

ԱՊ փորձագետները ուսումնասիրել են ՀՀ ԱՎԾ-ի ՍԳԻ արտադրման համակարգը, որը ԱՄՀ –ի Excel ծրագրի վրա հիմնված համակարգի ձևափոխված տարբերակն է: Ելնելով այն սահմանափակումից, որ միայն Excel-ը կարող է օգտագործվել, գործնականում արտադրական համակարգում հետագա որևէ բարելավման հնարավորություններ չկան: Եթե համակարգի բարելավումը ենթադրում է մարդկային ռեսուրսների կրճատում, որն անհրաժեշտ է արտադրական համակարգի աշխատանքը իրականացնելու համար, ապա կարելի է դիտարկել Excel –ը մեկ այլ հարթակով փոխարինելու հնարավորությունը: Այս հարթակը կարող է լինել MS Access, որը նույնպես հանդիսանում է Office փաթեթի մի մասը:

Լատվիայի փորձը ցույց է տալիս, որ մոտավորապես 1 տարի կպահանջվի մշակելու ՍԳԻ/ՀՍԳԻ արտադրական համակարգը՝ օգտագործելով միայն ներքին ծրագրավորողների ռեսուրսները: Այս արտադրական համակարգը հնարավորություն է տալիս առաջնային տվյալների ստուգման, վավերացման, ագրեգացման, բացակա գների իմպուտացիայի համար (ներառյալ ոչ սեզոնային իմպուտացիաները), ինչպես նաև ինդեքսի հաշվարկի և հաշվետվության պատրաստման և գնադիտարկողների հետ տեղեկատվության փոխանակման համար:

Այս քննարկման թեմայի հետ կապված ԱՊ փորձագետները ներկայացրեցին շնորհանդես տվյալների վավերացման և ստուգման վերաբերյալ, տես՝ հավելված Ե.3.7:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Գնադիտարկումների քանակի նվազեցման հետ կապված վերլուծությունները շարունակվելու են բոլոր ապրանքների խմբերի համար՝ բացառությամբ թարմ մրգերի և բանջարեղենի, արդեն իսկ հաշվարկվել է, որ ամսեկան գների դիտարկման քանակը պետք է փոփոխվի՝ դարձնելով դրանք երեքից երկու:

Հաջորդ գործունեության (Ե.4) թեման կլինի այս որոշման իրականացման առանձին աշխատանքային ծրագիրը և վերջինիս կազմակերպչական հետևանքները:

Տնային տնտեսությունների հետազոտության բաժինը պետք է սկսի COICOP դասակարգչի կիրառումը սկսած 2012 թվականից, ինչը հետևաբար կնպաստի տարեկան կշիռների արդիականացմանը, որը կարևոր քայլ է ՀՍԳԻ կանոնակարգի պահանջների կատարման առումով:

Կազմակերպվեց նաև սեմինար որակի ճշգրտման թեմայով և որոշվեց, որ Գների վիճակագրության բաժինը պետք է վերանայի որակի ճշգրտման իր փորձը քննարկված բոլոր ապրանքների վերաբերյալ, մասնավորապես՝ տեխնոլոգիական արտադրանքների և ավտոմեքենաների համար:

4. Գործողությունների իրականացում մինչև հաջորդ առաքելություն (Ե.4)

Սույն Ե բաղադրիչի շրջանակներում հաջորդ առաքելությունը այս պահի դրությամբ նախատեսված է իրականացնել 2012 թվականի մարտ ամսին:

ՇԵ և ԱՊ փորձագետները որոշեցին, որ հետևյալ աշխատանքները և գործողությունները պետք է իրականացվեն նախքան հաջորդ՝ Ե.4 գործունեությունը

- Շարունակել վերլուծությունները կապված գնադիտարկումները յուրաքանչյուր ամսվա 1-ին օրվանից ամբողջությամբ հանելու ազդեցության հետ: Արդյունքների վերաբերյալ պատրաստել շնորհանդես և ներկայացնել դրանք քննարկման:
  Եթե դրանք գրավոր նյութեր են, ապա պատրաստել անգլերեն թարգմանությունը նախքան Ե.4 գործունեությունը:

- Ուսումնասիրել և նկարագրել այն կազմակերպչական փոփոխությունները, որոնք պետք է իրականացվեն, եթե կատարվեն գնադիտարկումների ժամանակային և մեթոդաբանական փոփոխություններ:
  Եթե դրանք գրավոր նյութեր են, ապա պատրաստել անգլերեն թարգմանությունը նախքան Ե.4 գործունեությունը

- Շարունակել ընտրանքի տարեկան արդիականացումների գործընթացը՝ ներառյալ գնադիտարկողներին ներկայացուցչական ապրանքների գնահատման գործընթացում ներգրավվելը:
  Եթե դրանք գրավոր նյութեր են, ապա պատրաստել անգլերեն թարգմանությունը նախքան Ե.4 գործունեությունը

- Հետազոտել, թե որ ապրանքների խմբերի որակի ճշգրտման մեթոդները կարող են կիրառվել/փոփոխվել առկա պրակտիկայի համեմատությամբ:
  Եթե դրանք գրավոր նյութեր են, ապա պատրաստել անգլերեն թարգմանությունը նախքան Ե.4 գործունեությունը

- COICOP-ից COICOP/HICP –ին անցնելու կարգավիճակը (խմբավորման հետ կապված հարցեր)

- Կազմակերպել սեմինար տարածաշրջանային գրասենյակների հետ:

- Կազմակերպել հանդիպում ՇԵ քաղաքականության փորձագետների հետ:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Գործունեություն Ե.3 Տեխնիկական մեթոդաբանության մշակում

1. Գործունեության նպատակը

Գործունեության նպատակն է հետևել Ե1 + Ե2 գործունեությունների ընթացքին, ներառյալ ընտրանքի օպտիմալացմանը և գնային ինդեքսների որակի ճշգրտումների բարելավմանը՝

- Աջակցել ընտրանքի չափի նվազեցման հետ կապված վերլուծությունների վերաբերյալ եզրակացություններ տալու գործընթացում;
- Հետևել տարածքային վիճակագրական գրասենյակների կազմակերպչական աշխատանքների հետևանքներին, որոնք կապված են գնային հավաքագրման ժամանակային և ծավալային հնարավոր փոփոխությունների հետ;
- Խորհուրդներ տալ ընտրանքի տարեկան արդիականացումների վերաբերյալ;
- Աջակցել սահմանելու սպառման այն ոլորտները, որտեղ պետք է փոփոխվի որակի ճշգրտման մեթոդը;
- Որակի ճշգրտման մեթոդների գիտելիքների և փորձի փոխանակում, մասնավորապես նրանց, որոնք վերաբերվում են տեխնոլոգիական արտադրանքներին;
- Աջակցել ապահովելու համար որպեսզի բավարար թվով առարկաներ և էլեմենտար ագրեգատներ ներկայացնեն սպառողական շուկայի բազմազանությունը COICOP-ի յուրաքանչյուր կատեգորիայում;

2. Գործունեության ակնկալվող արդյունքները

Գործունեության ակնկալվող արդյունքները հետևյալն են՝

- Եզրակացություններ թե ինչպես պետք է փոփոխել գների հավաքագրման ժամկետները և դրանց կազմակերպումը;
- Սեմինար COICOP-ի հատուկ կատեգորիաների որակի ճշգրտումների վերաբերյալ;
- Աշխատանքային ծրագիր կապված ընտրանքի տարեկան արդիականացման հետ;
- Ե1+ Ե2 –ի ընթացքում կազմված աշխատանքային ծրագրի հնարավոր արդիականացում (վերանայում)
- Հաջորդ գործունեության՝ Ե 4-ի տեխնիկական առաջադրանքի նախագծում

3. Ծրագրի մասնակիցները

Գագիկ Գեվորգյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ (ՇԵ բաղադրիչի ղեկավար)
Գուրգեն Մարտիրոսյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ
Մարիամ Երիցյան, Գլխավոր մասնագետ, գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին

Օսկարս Ալկսնիս, Լատվիայի Վիճակագրության կենտրոնական բյուրո, Գների վիճակագրության վարչություն, ՍԳԻ բաժնի ղեկավար
Փոլ Լուբզոն, Դանիայի վիճակագրություն, Գների և սպառման բաժնի ղեկավար

Հավելված 2. Առաքելության ծրագիրը, Սեպտեմբերի 5-9, 2011

Ժամը	Վայրը	Միջոցառում	Նպատակը/մանրամասները
Երկուշաբթի, սեպտեմբերի 5 առավոտյան	Կոնգրես Հյուրանոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Շաբաթվա ծրագրի քննարկում
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և փորձագետների հետ	Ներկայիս կարգավիճակը: ՇԵ բաղադրիչի ղեկավարը ներկայացնում է Ե1+Ե2 գործունեությունների զարգացումները և Ե1+Ե2 զեկույցի ներքին ընթացքը
	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետների հետ	Ներկայիս SS համակարգի ներկայացում և ցուցադրում
Երեքշաբթի, սեպտեմբերի 6 առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Սեմինար	Շնորհանդես ԱՊ փորձագետների կողմից որակի ճշգրտումների վերաբերյալ՝ շեշտը դնելով տեխնոլոգիական արտադրանքների վրա (համակարգիչներ, հեռախոսներ) և օգտագործված մեքենաներ: Քննարկել սպառման այն ոլորտները, որոնք ենթակա են որակի ճշգրտման մեթոդների բարելավմանը:
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետների հետ	ՍԳԻ/ՀՍԳԻ արտադրման համակարգը: Առկա SS համակարգի հնարավոր բարելավումները:
Չորեքշաբթի, սեպտեմբերի 7	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետների հետ	Ապագա ընտրանքը և կշիռները. 1.Ամսեկան 3 ից 2 հավաքագրումներ 2. Ընտրանքի չափի օպտիմալացում 3.Անհրաժեշտ առարկաներ և էլեմենտար ագրեգատներ COICOP-ի յուրաքանչյուր կատեգորիան համապատասխան ներկայացնելու համար
Հինգշաբթի, Սեպտեմբերի 8 առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետների հետ	Ժամանակային պլանի քննարկում՝ (աշխատանքային ծրագիր) հաշվի առնելով նոր ընտրանքի և կշիռների համակարգի ներկայացումը
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ ՇԵ փորձագետների հետ	Զեկույցի մշակում և հնարավոր հետևողական գործունեություններ կապված ընտրանքի և կշիռների հարցերի հետ, ինչպես նաև աշխատանք SS լուծումների վերաբերյալ:
Ուրբաթ, Սեպտեմբերի 9 առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	Նախնական եզրակացությունների քննարկում և աշխատանքային ծրագրի հնարավոր արդիականացումներ

Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Բրիֆինգ ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	Եզրակացություններ և առաջարկություններ: Հաջորդ առաքելության որոշումների հետևանքները և ՇԵ փորձագետների կիրառելի աշխատանքային ծրագիր:

Հավելված 3. Անձինք, որոնց հետ հանդիպումներ են կայացել

Պրն. Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ, ՇԵ բաղադրիչի ղեկավար
Անահիտ Սաֆյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ
Գուրգեն Մարտիրոսյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ
Մարիամ Երիցյան, գլխավոր մասնագետ, Գների վիճակագրության և միջազգային բաժին
Իշխան Սարգսյան, Արմավիրի մարզային գործակալության պետ
Նիկողոսյան, Էջմիածնի տարածքային գործակալության գլխավոր մասնագետ
Դիանա Մարտիրոսովա, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ
Գայանե Սարգսյան, Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ

Հավելված 4. Գնադիտարկումների քանակի նվազեցման վերլուծություններ

Գրառումը պատրաստվել է ՀՀ ԱՎԾ-ի Գների վիճակագրության բաժնի կողմից նախքան Ե.3 գործունեությունը՝ հետևելով Ե.1/Ե.2 զեկույցի 3.2 բաժնի աշխատանքներին:

Իրականացվել են տարաբնույթ հաշվարկներ և վերլուծություններ: Երևան քաղաքի օրինակով 2011թ. հունվար-հուլիս ամիսների համար հաշվարկվել են Սպառողական գների ինդեքսներ՝

- Յուրաքանչյուր ամսվա համար գների և սակագների երեք անգամյա դիտարկումների փոխարեն միջին գների հաշվարկներից հանելով ՍԳԻ-ի հավաքակազմում առկա 470 անվանում ապրանք-ծառայությունների (901 անվանում ապրանք,ծառայություն-ներկայացուցիչ) յուրաքանչյուր ամսվա սկզբի՝ 1-ի դրությամբ դիտարկված գնային տեղեկատվությունը՝ հաշվարկում թողնելով 10-ի և 20-ի դրությամբ դիտարկված գնային տեղեկատվությունը: Ամփոփ ցուցանիշները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

	2010	2011						
		I	II	III	IV	V	VI	VII
Հիմնական ՍԳԻ	100.0	107.9	108.6	109.1	108.8	108.7	107.4	104.2
		3.5	0.6	0.5	-0.3	-0.1	-1.2	-3.0*)
	100.0	107.2	108.1	108.5	108.4	108.1	106.3	103.6
ՍԳԻ 2 դիտարկմամբ հաշվարկված		2.8	0.9	0.4	-0.2	-0.3	-1.6	-2.6*)
Տարբերություն	100.0	0.8	0.4	0.6	0.4	0.7	1.1	0.6
%-ային կետով		*0.7*	*-0.3*	*0.1*	*-0.1*	*0.2*	*0.4*	*-0.4*)

**) գնաճը նախորդ ամսվա նկատմամբ:*

- Յուրաքանչյուր ամսվա համար գների և սակագների երեք անգամյա դիտարկումների փոխարեն միջին գների հաշվարկներից հանելով ՍԳԻ-ի հավաքակազմում առկա 470 անվանում ապրանք-ծառայությունների (901 անվանում ապրանք, ծառայություն-ներկայացուցիչ) յուրաքանչյուր ամսվա սկզբի՝ 1-ի դրությամբ դիտարկված գնային տեղեկատվությունը՝ հաշվարկում թողնելով 10-ի և 20-ի դրությամբ դիտարկված գնային տեղեկատվությունը, պահպանելով միրգ, բանջարեղեն և կարտոֆիլ ապրանքախմբերում ներառված 44 անվանում գյուղատնտեսական մթերքների 3 անգամյա դիտարկումները: Ամփոփ ցուցանիշները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

	2010	2011						
		I	II	III	IV	V	VI	VII
	100.0	107.9	108.6	109.1	108.8	108.7	107.4	104.2
Հիմնական ՍԳԻ		3.5	0.6	0.5	-0.3	-0.1	-1.2	-3.0*)
	100.0	107.7	108.5	109.1	108.7	108.6	107.4	104.1
ՍԳԻ 2 դիտարկմամբ հաշվարկված (միրգ, բանջարեղենը՝ 3 դիտարկում)		3.3	0.8	0.5	-0.3	-0.1	-1.1	-3.1*)
Տարբերությունը	*100.0*	*0.2*	*0.0*	*0.0*	*0.1*	*0.1*	*0.0*	*0.2*
%-ային կետով		*0.2*	*-0.2*	*0.0*	*0.1*	*0.0*	*-0.1*	*0.1*)

**) գնաճը նախորդ ամսվա նկատմամբ:*

Նշված երկու մեթոդներով կատարված ՍԳԻ-ի հաշվարկները խոշորացված 10 և 65 ապրանքային խմբերով բերված են կից աղյուսակներում:

Կատարված Հաշվարկների նպատակն էր պարզելու.

- ինչպիսի ազդեցություն կունենա ՀՀ ՍԳԻ-ի վրա ՀՀ-ում գների դիտարկումների քանակը պակասեցնելը (3 անգամյա դիտարկման փոխարեն 2 անգամ դիտարկում կատարելու դեպքում),
- դիտարկման հաճախականությունը նվազեցնելու արդյունքում պակասեցնել և թեթևացնել գներ դիտարկող վիճակագրերի ծանրաբեռնվածությունը,
- ստեղծել հնարավորություն գներ դիտարկող վիճակագիրներին ներգրավելու հետևյալ լրացուցիչ աշխատանքներում.
- դիտարկվող առևտրի և ծառայությունների կետերի, ապրանք-ծառայությունների ընտրանք,
- ապրանք-ծառայությունների տեխնիկական բնութագրերի պարբերաբար ճշգրտում,
- ապրանք-ծառայությունների շուկայից անհետացման դեպքում, նոր ապրանքով դրանց փոխարինում,
- շուկայում ի հայտ եկած նոր ապրանքի կամ ծառայության տեսակի գների դիտարկում և միջին գների հաշվարկների իրականացում:
- անհրաժեշտության դեպքում նոր տեսակի ապրանքների կամ ծառայությունների ներառում ՍԳի-ի հաշվարկներում (դիտարկվող ապրանք-ծառայությունների հավաքակազմի ընդլայնում): Օրինակ, ապահովագրական ծառայություններ, բնակարանային ծառայություններ, գործածված երկարատև օգտագործման ապրանքներ և այլն:

Նշված միջոցառումները կրելու են մշտական բնույթ, ամբողջ տարվա ընթացքում:

Եզրակացություն:

1. Հաշվի առնելով միրգ, բանջարեղեն և կարտոֆիլ ապրանքախմբում ներառված ապրանքատեսակների խիստ սեզոնային բնույթը, որի հետևանքով դրանց գներն տարվա տարբեր ժամանակահատվածներում, նույնիսկ ամսվա ընթացքում, ունեն գնային կտրուկ տատանումներ և համեմատաբար մեծ տեսակարար կշիռ (հետևաբար ունենալով մեծ ազդեցիկություն ընդհանուր ՍԳԻ-ի վրա), պահպանել ներկայիս գործող կարգը՝ գների դիտարկումներն իրականացնել ամսվա ընթացքում երեք անգամ (1-ին, 10-ին, 20-ին կամ դրանց մոտակա օրերին):
2. Հաշվի առնելով, որ ՍԳԻ-ի հաշվարկներում ներառված մյուս ապրանք-ծառայությունների գների և սակագների փոփոխություններն ամսվա ընթացքում էական չեն, և ազդեցությունը ՍԳի-ի վրա մեծ չէ, ուստի այդ ապրանք-ծառայությունների գների դիտարկումների հաճախականությունը կրճատել և 3 դիտարկման փոխարեն կատարել 2 դիտարկում՝ յուրաքանչյուր ամսվա 10-ին և 20-ին կամ դրանց մոտակա օրերին:
3. Գներ դիտարկող վիճակագրերին առավել շատ ներգրավել ներկայացուցչական ապրանք-ծառայությունների գնահատման աշխատանքներում և ամեն տարի դրանց վերանայման ու արդիականացման գործընթացին:
4. Կատարել համապատասխան մեթոդաբանական և ծրագրատեխնոլոգիական փոփոխություններ ՀՀ-ում ՍԳԻ-ի և ՀՍԳԻ-ի հաշվարկման համար՝ հետագայում թողնելով միայն ՀՍԳ-ին:
5. Ավելի հաճախ (հնարավոր է տարին մեկ անգամ) իրականացնել ՍԳԻ-ի հաշվարկման ապրանք-ծառայությունների հավաքակազմի կշիռների, կազմ ու կառուցվածքի վերանայում, դրանք համալրելով նոր ներկայացուցչական ապրանքներով և ծառայությունների տեսակներով:
6. Իրականացնել հրահանգավորում և սեմինար պարապմունքներ գներ դիտարկող վիճակագրերի մասնակցությամբ:
7.Կազմակերպել համատեղ քննարկումներ ԵՄ փորձագետների և սպառողների հետ, բացատրելով նշված կազմակերպչական և մեթոդաբանական փոփոխությունների նպատակը և ազդեցությունը գների վիճակագրության հետագա զարգացման վրա:

Նախանշված միջոցառումներն իրականացնել 2011-2012թթ ընթացքում <<Թվինինգ>> ծրագրի շրջանակում:

Հավելված 5. Բաղադրիչի աշխատանքային ծրագիրը (արդիականացված)

ԵՄ Թվինինգ Ծրագիր

Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

ՀՍԳԻ աշխատանքային ծրագիր Հայաստանի համար

Առաջադրանք / Ժամանակեռը	2011									2012												2013
	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Հունվար
Ընտրանք և որակի ճշգրտումներ																						
- Վերլուծել գների հավաքագրումը յուրաքանչյուր ամսվա 1 ից հանելու ազդեցությունը																						
- Գների հավաքագրման փոփոխման կազմակերպչական Փոփոխությունները																						
-ընտրանքի տարեկան արդիականացում՝ օգտագործելով գնաղիտարկողներին գնահատելու ներկայացուցչական ապրանքները																						
- Որոշել, թե սպառման որ ոլորտների համար է անհրաժեշտ փոփոխել որակի ճշգրտման մեթոդները																						
- Որակի ճշգրտումներ տեխնոլոգիական արտադրանքների համար																						
Ընտրանքի նվազեցում՝ ամսվա մեջ ավելի քիչ ընտրանքային օրեր																						
Ապահովել բավարար էլեմենտար ազդեցատներ COICOP-ի յուրաքանչյուր կատեգորիայում տարատեսակ ապրանքներ ներկայացնելու համար																						
Կշռվածություն																						
Դարգել արդյոք հնարավոր է ՏՏՀ բաժնի կողմից COICOP (ԱՄԴ)/ՀՍԳԻ կիրառումը այս ծրագրի շրջանակներում																						
Հիմնվելով Հայաստանի փորձի և գիտելիքների վրա՝ նախապատրաստել նոր արտադրական համակարգ կշիռների համար:																						
Ստեղծել EXCEL համակարգ՝ կշիռների փոփոխությունը ավելի քիչ ժամանակատար դարձնելու համար																						
Ավտոմեքենաների ապահովագրության ներառումը ՏՏՀ մեջ																						
Ավտոմեքենաների ապահովագրման կշիռների հաշվարկում																						
Գնային հասկացությունը																						
Գտնել ավելի քիչ ժամանակատար միջոցներ՝ բացակայող /համընկնող գների ստուգման համար: Excel լուծումներ																						
Ներառել ծառայությունները այն ամսվա ինդեքսի մեջ, որ ամսին որ դրանք սպառվել են:																						
Սպառման դասակարգում																						
Նախապատրաստել COICOP (ԱՄԴ)/ՀՍԳԻ կշիռները և գների բաշխումը																						

Հավելված 5, շարունակություն